

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի պետի /ծածկագիր՝ 2.1-2/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է քաղաքաշինական հողերի և շինությունների կադաստրավորում, իրականացնում է համայնքային զարգացման քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքները, սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի-շինությունների կառուցման ընթացքին համաձայն կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և Համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների, սահմանված կարգով համայնքի ղեկավարի հանձնարարությամբ ձևակերպում է ավարտված շինարարության շահագործման փաստագրումը, օրենքով սահմանված կարգով կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինությունների իրականացումը, կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը, աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ճարտարապետության կամ քաղաքաշինության բնագավառների գծով բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երկու տարվա ընթացքում համայնքի ղեկավարի, ինչպես նաև հայեցողական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ, կամ մինչև 2015թ-ի հունվարի 1-ը տեղական ինքնակառավարման մարմիններում կամ քաղաքացիական ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ: «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Քաղաքաշինության մասին», «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին», «Հողային օրենսգրքի» և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2011թ մայիսի 27-ին, ժամը 10.00-ին, քաղաքապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

• դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին

• արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3 X4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը և սոցքարտի պատճեն:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ն բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝ 2011թ՝ մայիսի 12-ը, ժամը 18.00-ն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի /մասնակիցներից մեկի/ կողմից զբաղեցնելը:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել՝ Գորիսի քաղաքապետարան /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս Անկախության 3 հեռ. 0284-2-25-53/, ՀՀ Սյունիքի մարզպետարան, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ. Նժդեհի 1 հեռ. 0285-2-35-50/